



Հակոբ Պարոնյան

Խիկար

Խիկարի գուշակութիւնք - 2

ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Գլխուս վրայ Ես քուկին սպասաւորդ չեմ :

Ո՞ր տեսնուի՞նք վաղը Կ ' ուզե՞ս հեռանալ եւ գլուխս չցաւցնել :

Կբողոքեմ Ա՛հ եթէ կարողանայի չարիք ս ' ընել քեզ :

Սուրճ մը կ'առնե՞ք Գործ ունիմ, բաներնիդ գացէք :

Չէք երեսար կոր Պարտքդ ե՞րբ պիտի վճարես, աղա :

Կխոստանամ Բան ս ' ալ չեմ կրնար ընել :

Կրնանք քիչ մը տեսնուիլ Կրնա՞ք ինձի չորս հարիւր ոսկի տալ :

Ի՞նչ է մեր հաշիւը Այս օրերս չեմ կրնար քեզի ստակ տալ, քիչ ս ' ալ համբերէ :

Աղան դուրս չելներ կոր Հիւր ընդունելու ժամանակ չունի՞նք :

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՐԵՒԵԼԻ ԱՆՏԻՑ

Ի բարձրագույն անօթոյ մինչեւ ցայժմ են անք 1 0

Ի ծառայման շողորորթութեան ի թերթս Հայկականս 9

Ի մտից պճնասիրութեան ի կրօնատրս 2 0

Յանգործադրութենէ Ներքին Կանոնադրութեան Ընդհանուր ժողովոյ 8

Ի հաստատութենէ աներեսութեան 1 0

Յորոշմանէ հաստատութեան Ընծայարանի 6

Ի կործանմանէ Շահ - Նուպար վարժարանի 1 5

Ի կործանմանէ թաղային վարժարանաց մայրաքաղաքիս 28

Ի հաստատութենէ տպագրութեան ի Հայս եւ ի դժբախտութենէ տպարանապետաց, գրաշարաց, հեղինակաց, դասատուաց եւ դպրաց 32 1

Ի բարձրագույն հնագանդութեան ի փոքունց 2 0

Ի բարձրագույն գաւազանաց յազգային վարժարանաց 2 1

Ի կորստենէ կողմնացուցին ի Հայս 8

Ի գիտոյ խաբէութեան 9

Յանկանոնութենէ հաւաքման ազգային տրոց 2 8

Ի բարձրագույն պարզասիրութեան ի Հայ կանանց 2 6

Յերկրորդ նորոգութենէ անտարբերութեան ի Հայս 1 8

ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Գլխուս վրայ Ես քուկին սպասատրոյ չեմ :

Ո՞ր տեսնուի՞նք վաղը Կ ' ուզե՞ս հեռանալ եւ գլուխս չցաւցնել :

Կբողոքեմ Ա՛հ եթէ կարողանայի չարիք մ ' ընել քեզ :

Սուրճ մը կ'առնէ՞ք Գործ ունիմ, բաներնիդ գացէք :

Չէք երեսար կոր Պարտքդ ե՞րբ պիտի վճարես, աղա :

Կխոստանամ Բան մ ' ալ չեմ կրնար ընել :

Կրնանք քիչ մը տեսնուիլ Կրնա՞ք ինձի շորս հարիւր ոսկի տալ :

Ի՞նչ է մեր հաշիւը Այս օրերս չեմ կրնար քեզի ստակ տալ, քիչ մ ' ալ համբերէ :

Աղան դուրս չելներ կոր Հիւր ընդունելու ժամանակ չունինք :

ՓՈՒՆՉ

Երբ աղջիկ մը դադրի կարմրելէ՝ գեղեցկութեան ամենահզօր հրապոյրը կորուսած է :

*

Միրոյ անձնատուր եղողը մեծութեանց եւ իմաստութեան հրաժեշտ կու տայ :

*

Երկինք պատիժ սահմանած չեն սիրահարաց երդումներուն համար :

*

Պգտիկ աղջիկներն պաճուճապատանքով կխաբուին, մեծերն ալ երդումով :

*

Լռութիւնն տրուած է կնոջ՝ իւր միտքը աւելի աղէկ բացատրելու համար :

*

Երբ աղջիկներն ամուսնանալու տարիքի մէջ են, իրենց լոռութիւնն անգամ էրիկ մը կ' ուզէ :

*

Գեղեցիկ կին մը պարզ հագուելու է՝ աւելի շնորհք ունենալու համար, տգեղ կինն ալ պարզ հագուելու է՝ նուազ տգեղ ըլլալու համար :

*

Գեղեցիկ կանանց ընկերութեան համար իմաստուն մարդոց ընկերութիւնը թողուն կնմանի կաքաիկի միսը թողուլ եւ թութակինն ուտել, որովհետեւ ասոր փետուրներն աւելի գեղեցիկ են :

*

Առանձնութիւնը խաբուած սիրտերու մխիթարութիւնն է :

*

Երկու տեսակ անձեր կան, որոնցմէ կրնանք ապտակուիլ առանց բարկանալու. կիներն եւ եպիսկոպոսները :

*

Աճեցէք եւ բազմացարուք, ամուսնութեան գլխաւոր վախճանն է: Բայց շատ մարդիկ կան, որ այս աստուածային խօսքերը մտիկ չեն ըներ եւ պիտի կարգուէին, ընդհակառակն, եթէ վստահ լինէին թէ չպիտի աճէին ու բազմանային. կին մը սիրելի է իրենց այնքան՝ որքան ամուլ է :

*

Ամենէն առաքինի կինն այն է, որուն վրայօք քիչ կխօսուի :

Կեանքը ծաղիկ մ' է, սէրն անոր մեղրն է :

*

Գեղեցիկ կանանց սիրտերը տարեգլխու շաքարեղէններու պէս հանելուկներու մէջ փաթտուած են :

*

Աւելի ականջներով քան թէ աչքերով փնտռելու է կին մը :

*

Եթէ կին մը հարիւր յանգանք ալ գործած ըլլայ՝ մի գարներ անոր նոյն ~ իսկ ծաղիկով մը :

*

Կիներն անոր համար կբամբաստին, որովհետեւ պտուղ ունեցող ծառերուն միայն քար կնետուի :

*

Օրէնք դնողներն այրեր են, իսկ բարքերը հաստատողները կիներն են :

*

Մինչեւ քսանըհինգ տարեկան կանանց համար աշխարհս դրախտ մ' է. մինչեւ քառասուն տարեկան կանանց համար քաւարան մը, իսկ մնացած բոլոր կեանքերնուն մէջ դժոխք :

*

Միրոյ վրայ խօսող ծերն ակնոց դնող կոյրէն ավելի խենթ է :

*

Խոհեմութիւնն ու սէրն իրարու հետ շեն կրնար միանալ :

*

Կնիկը ծեծելը ալիւրի պարկ մը ծեծելու կնամանի. աղէկը կ ' երթայ, գէշը կմնայ :

ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Գլխուս վրայ Ես քուկին սպասաւորդ շեն :

Ո՞ր տեսնուինք վաղը Կ ' ուզե՞ս հեռանալ եւ գլուխս չցաւցնել :

Կբողոքեմ Ա՛հ եթէ կարողանայի չարիք մ ' ընել քեզ :

Սուրճ մը կ'առնե՞ք Գործ ունիմ, բաներնիդ գացէք :

Չէք երեսար կոր Պարտքդ ե՞րբ պիտի վճարես, աղա :

Կխոստանամ Բան մ ' ալ շեն կրնար ընել :

Կրնանք քիչ մը տեսնուիլ Կրնա՞ք ինձի չորս հարիւր ոսկի տալ :

Ի՞նչ է մեր հաշիւը Այս օրերս շեն կրնար քեզի ստակ տալ, քիչ մ ' ալ համբերէ :

Աղան դուրս չելներ կոր Հիւր ընդունելու ժամանակ չունինք :

ՍԸԿԷ ՆԸԿԷ

Երկու բարեկամներ Բերա մեծ փողոցին մէջ կառուցուած քարուկիր շէնքի մը առջեւ կկայնին.

Ի՞նչ աղուոր շէնք է սա, կ ' ըսէ մին. մինչեւ հիմա ասանկ տուն մը շինուած չէր Կ. Պօլսոյ մէջ. առաջին անգամն է, որ ասանկ տուն մը կտեսնամ :

Ատանկ է, շատ աղուոր է. Բարիզ շինուած ըլլալու է, կը պատասխանէ միւսը :

*

Հայերէն բառարան մը կու տա՞ք ինձի :

Հրամանեցէ՛ք :

Այս բառարանը ցանկ չունի՞ յետեւը :

Բառարանը ցանկ կ' ունենա՞յ :

Հապա ուզած բառս ի՞նչպէս գտնամ մէջը :

*

Կին մը պատկերը հանել տալու համար լուսանկարի մը կ' երթայ. աթոռի վրայ կը նստի եւ իւր բոլոր ոյժը կսկսի թափել, որ բերանը շատ պզտիկ ելլէ :

Պատկերահանը տեսնելով անոր այս ճիգը՝ կ' ըսէ.

Ինքզինքնիդ մի՛ նեղէք, տիկին. եթէ կ' ուզէք՝ բերան չեմ շիներ ամենեւին :

*

Համբակ սափրիչ մը հարցուց մարդու մը, գոր կածիլէր.

Քանի՞ եղբայր էք :

Եթէ սրկէց ողջ առողջ դուրս ելլամ՝ չորս եղբայր ենք, պատասխանեց ածիլուողը :

*

Ո՛հ, կ' ըսէր հիւանդ մը. մարդ չի գար զիս տեսնելու :

Այդպէս պէտք է որ ըլլայ. քեզի ո՞վ ըսաւ, որ պարտքերդ վճարես :

*

Երկու եղբայրներ այնչափ շատ կնմանէին իրարու, որ անոնց դրացին անգամ չէր կրնար գանոնք իրարմէ որոշել :

Ասոնցմէ մէկը կմեռնի. դրացին օր մը միտին հանդիպելով կհարցընէ.

Աստուածդ սիրես, ըսէ՛ ինձի, դո՞ւն մեռար թէ եղբայրդ :

*

Պարոն Յակոբ, Քեաղըրտխանէն ախորժեցա՞ր նայինք, կրցա՞ր լաւ մը գուարճանալ :

Շիտակը՝ շատ աղուոր տեսարան ունի ձեր Քեաղըրտխանէն. բայց բազմութիւն շատ ըլլալուն աղէկ մը համը չառնուիր կոր. թէ որ այնչափ բազմութիւն չըլլայ նէ՛ շատ մարդ պիտի երթայ հոն :

*

Երկու քոյր խնդրոյ մը համար դատարան կներկայանան :

Նախագահն ասոնց մեծին կը հարցնէ.

Քանի՞ տարու էք, օրիորդ :

Քսան եւ ութը տարու եմ, պարոն նախագահ :

Նախագահը պզտիկին դատնալով կը հարցնէ.

Դուք քանի՞ տարեկան էք :

Երեսունըմէկ տարեկան, պ. նախագահ :

Նախագահին դիմանադպրին դառնալով կ' ըսէ.

Չըլլայ որ սխալ արձանագրես. անդրանիկը պգտիկն է :

*

Ներկայացման մը մէջ դերասան մը իննստուն տարեկան ծերունիի մը դերը կկատարէր :

Պատաին մէկը այս դերասանին հազարով տքարով տեսարան գալը տեսնելով ըսաւ.

Տէ՛ր ողորմեա ... կը վայելէ՞, որ ասանկ ծեր մարդ մը խաղցունեն :

*

Միամիտ մարդուն մէկը, առետրական գործերէ քաշուած՝ ազարակի մը մէջ կեանք կ' անցունէր :

Այս մարդն օր մը բարեկամներէն մէկուն նամակ մը գրելով այսպէս կ' ըսէր.

« Ազարակին կենդանիներուն մէջ ընդհանուր հիւանդութիւն կտիրէ. գրեթէ ես ալ քաշառողջ վիճակ մը չունիմ »:

*

Իմացա՞ր. մեր դրացին դարձեալ սնանկացեր է անցեալ շաբթու :

Անիկա յ տարին քանի մ' անգամ սնանկանալն բան գործ ըրած է իրեն :

Խեղճութեանը մի՛ նայիր, անիկա յ գործը գիտցող մարդ է. անպատճառ բան մը նետած է մէկ կողմ :

Այո՛, խղճմտանքը :

*

Գինեմուխն մէկը չափազանց արբեալ՝ կէս օրին գինետունէն դուրս ելնելուն՝
մէկուն կը հանդիպի եւ արեւը ցուցնելով կհարցնէ անոր.

Կը խնդրեմ, ըսէ՛ ինձ, լուսին է աս, թէ արեւ :

Անցորդը գինովին երերուն վիճակը տեսնելով՝ կը պատասխանէ.

Շիտակը չեմ գիտեր. ես աս տեղացի չեմ :

ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՒՆՔ

Գլխուս վրայ Ես քուկին սպասաւորդ չեմ :

Ո՞ր տեսնուինք վաղը Կ ' ուզե՞ս հեռանալ եւ գլուխս չցաւցնել :

Կբողոքեմ Ա՛հ եթէ կարողանայի չարիք մ ' ընել քեզ :

Սուրճ մը կ'առնէ՞ք Գործ ունիմ, բաներնիդ գացէք :

Չէք երեւար կոր Պարտքդ ե՞րբ պիտի վճարես, աղա :

Կխոստանամ Բան մ ' ալ չեմ կրնար ընել :

Կրնանք քիչ մը տեսնուիլ Կրնա՞ք ինձի չորս հարիւր ոսկի տալ :

Ի՞նչ է մեր հաշիւը Այս օրերս չեմ կրնար քեզի ստակ տալ, քիչ մ ' ալ համբերէ :

Աղան դուրս չելներ կոր Հիւր ընդունելու ժամանակ չունինք :

ԱՌԱԾՆԵՐ

Ճարտարութիւնը բախտի աջ ձեռքն է, չափաւորութիւնը՝ ձախ ձեռքը :

Ծոյլի համար ամեն բան դժուար է :

Շատ պարտք ընողն ազատութիւնն ձեռքէ կհանէ ու հազար նեղութեանց մէջ կ' իյնայ :

Աւելի աղէկ է երեկոյին առանց կերակուր ուտելու պատկիլ, քան թէ առաւօտուն պարտքով ելլել :

Մանր ծախքերն եթէ շատնան՝ մեծամեծ ժառանգութիւններ կհատցնեն :

Աւելորդ բաներ գնողը կհարկադրուի հարկատուները ծախելու :

Քիչը կրկնուելով կը շատանայ :

Դատարկութիւնը ժանգ ս' է, որ աշխատանքէն աւելի կը մաշեցնէ :

Շատ բանի ձեռք գարնողը քիչը լմնցնէ :

Չես սիրուիր, թէ որ քեզի միայն սիրես:

Ամենուն բարեկամը եւ ոչ մէկուն բարեկամն է :

ՎԵՐՉ